Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
N 11 ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց
14 մարտի 2024 թվական

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

24. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1167-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցող՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյան

Հարցի տեսակը՝ զեկուցվող

Որոշվեց՝ ընդունել որոշումը

Ձայների հարաբերակցությունը՝ կողմ՝ 15, դեմ՝ 0

Վարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանին՝

ա. «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Ծառուկյանի հետ համատեղ 15-օրյա ժամկետում ստեղծել տեսահոլովակ, որում հստակ և մատչելի կարտացոլվեն Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026 թթ. ծրագրից օգտվելու կարգն ու պայմանները և այն ներկայացնել ՀՀ վարչապետին՝ հաստատման,

բ. Պաշտպանության նախարարության և այլ շահագրգիռ պետական մարմինների հետ սերտ համագործակցությամբ մեկտեղել աջակցության բոլոր ծրագրերը (այդ թվում՝ երեխայի ծննդյան և այլ աջակցության ծրագրերը) հանրությանը մանրամասն և պատշաճ ձևով լուսաբանելու և մեկ շահառուին հասանելի աջակցության տարբեր ծրագրերի հանրագումարը ներկայացնելու նպատակով,

գ. համագործակցելով ԼՂ-ից բռնի տեղահանված՝ ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության

2022-2024 թվականների ծրագրից օգտվող շահառուների հետ՝ վերջիններիս համաձայնությամբ, նրանց ներգրավել նշված ծրագրի լուսաբանման գործընթացին:

2) Մարզպետներին՝ աշխատանքներ տանել բնակիչներին (հատկապես սահմանամերձ) Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերի և դրանցից օգտվելու հնարավորությունների մասին տեղեկացնելու ուղղությամբ:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ